ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

ԴԱՆԻԵԼ ԻՈԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ՍԵՐԳՈՅԱՆ

Իրազեկ

քաղաքացիների միավորում

ԵՐԵՎԱՆ 2023

2020 թվականին Կառավարությունն ընդունեց ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող՝ 2020–2022 թվականների գործողությունների ծրագիրը[1]: Այդուհանդերձ, մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, հետագա բարեփոխումների թե՛ ժամանակացույցը և թե՛ բովանդակությունը բավականին տարբերվեցին նախատեսվածից:

2020 թվականին ոստիկանության բարեփոխումների համակարգման համար վարչապետի գլխավորությամբ ստեղծվեց[2] համապատասխան խորհուրդը, որում ներգրավվեցին նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Բարեփոխումների հիմնական պատասխանատու նշանակվեց Արդարադատության նախարարությունը: 2023 թ. հունվարին ստեղծվեց Ներքին գործերի նախարարությունը, որը դարձավ բարեփոխումների հիմնական պատասխանատուն, իսկ ներքին գործերի նախարար նշանակվեց ոստիկանապետ Վահե Ղազարյանը: Դրանից անմիջապես հետո քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, հայտարարելով, որ Վահե Ղազարյանն արմատապես դեմ է իրական բարեփոխումների իրականացմանը, լքեցին Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհուրդը[3]:

---

[1] ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020–2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին 23 ապրիլի 2020 թվականի 638–Լ կառավարության որոշում: https://www.arlis.am/documentview.aspx?docID=141877

[2] Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհուրդ ստեղծելու, խորհրդի անհատական կազմը և աշխատակարգը, խորհրդի անհատական կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի կարգը հաստատելու մասին ՀՀ վարչապետի որոշում, 6 օգոստոսի 2020 թվականի 903–Ա: https://www.irtek.am/views/act.aspx?aid=106627

[3] ՀԿ-ները դադարեցնում են աշխատանքը Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդում: https://uic.am/16581

Սույն զեկույցը չի սահմանափակվում նշված ռազմավարությամբ նախատեսված գործողությունների գնահատմամբ և չի ծածկում դրանով նշված բոլոր գործողությունները: Զեկուցում տեղ են գտել մի շարք խնդիրներ, որոնք վերջին տարիներին եղել են քաղաքացիական հասարակության ուշադրության կենտրոնում, և գնահատվում է դրանց մասով առկա առաջընթացը: Այդուհանդերձ, զեկույցում չկան ոստիկանության տնտեսական ոլորտի, ինչպես նաև ոստիկանների պատրաստման (վերապատրաստման) հետ կապված հարցերը:

Այսպիսով, վերջին տարիներին որևէ փոփոխություն չեղավ ոստիկանության պահվածքում, կառուցվածքում ու կարողություններում՝ հավաքների ու բողոքի ցույցերի սպասարկման մասով: Զանգվածային միջոցառումների սպասարկման հիմնական պատասխանատու ստորաբաժանումը ոստիկանության զորքերն են, որոնք իրենց կառուցվածքով, գիտելիքներով ու, որոշակի առումով, սպառազինությամբ ոչ թե ոստիկանական, այլ զինվորական (հրաձգային) ստորաբաժանում են:

Թեև ներդրվեց Պարեկային ծառայությունը, որը էապես բարելավեց արտաքին ծառայության կողմից հանցավորության դեմ պայքարը և ստեղծեց բոլոր նախադրյալները ոստիկանի՝ որպես հանրությանը ծառայողի կերպարի ստեղծման համար, սակայն ոստիկանության ղեկավարության կողմից խրախուսվեց ծառայությունը՝ ձևի, այլ ոչ բովանդակության համար, ինչպես նաև խաթարվեց բոլոր քաղաքացիների նկատմամբ հավասար վերաբերմունքով դրվածքի (և արտոնյալների բացառման) հաստատումը: Ավելին, տարեց տարի պարեկներն ավելի շատ սկսեցին ներգրավվել կանոնադրությամբ չնախատեսված գործառույթների մեջ, որի հետևանքով թերակատարվում են իրենց հիմնական գործառույթները:

Որևէ էական առաջընթաց չնկատվեց հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ուղղությամբ (բացի արտաքին ծառայությունից): Ի հակառակ ռազմավարությամբ նախատեսվածի, որևէ փոփոխություն չկրեց հանցավորության վիճակագրության վարումը, որը մանիպուլյատիվ է և հանրության մոտ ստեղծում է իրականությունից կտրված պատկեր (օրինակ՝ 5 տարվա կտրվածքով սպանությունների 75 տոկոսը համարվում է «բացահայտված», բայց դատարան է հասել նման գործերի ընդամենը 27 տոկոսը):

Վերջին տարիներին ոչ միայն որևէ դրական փոփոխություն չի եղել խոշտանգումների ու վատ վերաբերմունքի բացառման ուղղությամբ, այլև նվազեցվել են դա կանխող գործիքները (օրինակ՝ անջատվել են դոնորների միջոցներով ոստիկանության բաժիններում տեղադրված տեսախցիկները): 2023 թվականին արձանագրվել է վերջին 10 տարում նախադեպը չունեցող՝ բաժնում փաստաբանի նկատմամբ բռնության 3 դեպք:

Ոստիկանությունում չկա հակակոռուպցիոն քաղաքականություն. և որևէ ոստիկան որևէ փուլում չի անցնում բարեվարքության ստուգում, իսկ ատեստավորման որոշ բաղադրիչներ (մասնագիտական քննությունն ու հարցազրույցը) գործնականում կրում են ձևական բնույթ:

Վերջին տարիներին ոստիկանությունը նաև աչքի ընկավ դոնոր–հանրության ներկայացուցիչներին սխալ տեղեկություններ տրամադրելով, դոնորների հետ կապված մատակարարումներում կոռուպցիոն սկանդալով, ինչպես նաև սեփական սխալի պատճառով դոնորների միջոցները վատնելով:

Շարունակում է մտահոգիչ մնալ ոստիկանությունում կաշառակերության և կոռուպցիայի այլ դրսևորումների բարձր մակարդակը: Համատարած են արժանահավատ ահազանգերը և իրավապահների բացահայտումները՝ ոստիկանության այս կամ այն ստորաբաժանումում կոռուպցիոն դրսևորումների մասին[4]: Ընդ որում, թեև տեխնոլոգիաները հնարավորություններ ստեղծում են այդ դրսևորումներից շատերը կանխարգելելու համար, սակայն դրանց ներդրման միտում ոստիկանությունում չի նկատվում:

4 Բացահայտվել է կաշառքի դիմաց վարորդական վկայականների իրացման հանցավոր շղթա. 7 անձի մեղադրանք է ներկայացվել: https://www.tert.am/am/news/2023/12/02/investigative/4041827
Երեք անձի առաջարկել են 150 000–ական դրամի դիմաց ոստիկանությունում աշխատանքի տեղավորել. նրանք համաձայնել են: https://news.am/arm/news/791404.html
ՆԳՆ ոստիկանության ներքին անվտանգության վարչության ծառայողները բացահայտել են ոստիկանության պաշտոնատար անձանց կողմից կաշառք ստանալու առերևույթ հանցագործության դեպքեր: https://www.police.am/news/view/nav200123ngn.html

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Ոստիկանության կողմից խոշտանգումներն ու վատ վերաբերմունքը եղել և շարունակում են մնալ բավականին տարածված երևույթ: Այս երևույթների տարածման մասին վկայում են մի շարք հանգամանքներ, ինչպիսիքն են 2023 թվականին փաստաբաններին ոստիկանության ստորաբաժանումում ծեծի ենթարկելու աննախադեպ երևույթը, մի շարք այլ աղմկահարույց դեպքերը: Խոշտանգումների քանակի ավելացման մասին է վկայում նաև ՀՔԱՎ–ի ուսումնասիրությունը[5]:

Միաժամանակ, բավականին մեծացել է իրավապահների կողմից կասկածյալների նկատմամբ բռնությունների ու խոշտանգումների մասին արժանահավատ ահազանգերի քանակը: Համատարած են դարձել դեպքերը, երբ ահազանգեր ենք ստանում բերման ենթարկված անձանց ծեծի, վիրավորանքի, նրանց նկատմամբ հոգեբանական ճնշումների, մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, անգամ մարմնի տարբեր մասերին ծխախոտ հանգցնելու և խոշտանգման այլ դրսևորումների մասին[6]:

[5] Խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի խախտման գործերի քննությունն ու արձանագրված խնդիրները՝ ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գործունեության: https://hcav.am/report-03-07-2023/

[6] Ոստիկանական բռնությունները դառնում են համակարգային. ՀԿ-ների հայտարարությունը: https://uic.am/17146
ՀՔԱՎ-ը խստորեն դատապարտում է Ներքին գործերի նախարարության ոստիկանության Էրեբունի բաժնի ծառայողների կողմից անչափահասների և նրանց փաստաբանների նկատմամբ գործադրած բռնությունները: https://hcav.am/hcav-am-10-02-2023/

Խոշտանգումների հնարավոր դեպքերը կանխարգելելու նպատակով 2020 թ.–ին ոստիկանության ստորաբաժանումներում նախատեսվեց տեղադրել տեսագրող և տեսաձայնագրող համակարգեր, ինչը լրացուցիչ երաշխիք կհանդիսանար խոշտանգումների և անմարդկային այլ վերաբերմունքի հնարավոր դեպքերը կանխելու և բացահայտելու համար, ինչպես նաև կհստակեցվեին օրենքների իրավակիրառ գործընթացում առաջացող մի շարք խնդիրներ:

Ոստիկանության տարածքային բաժիններում տեսախցիկներ տեղադրվեցին Եվրամիության միջոցներով, UNDP–ի կողմից և (առանձին) ոստիկանության նախաձեռնությամբ: ԵՄ ֆինանսական աջակցությամբ տեղադրված տեսախցիկները պետք է տեղադրված լինեին այն սենյակներում, որտեղ հարցաքննվելու էին ոստիկանություն բերված մարդիկ, և այդ տեսախցիկներին հասանելիություն պետք է ունենային մի շարք սուբյեկտներ, այդ թվում՝ ՄԻՊ աշխատակազմը: Տեսախցիկները տեղադրվեցին ոստիկանապետի 2020 թ.–ի թիվ 17–Լ հրամանով, սակայն ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունմամբ և ուժի մեջ մտնելու կապակցությամբ հետաքննական լիազորությունների փոփոխություններով պայմանավորված՝ ՀՀ ոստիկանության պետի 2022 թ. թիվ 26–Լ հրամանով ՀՀ ոստիկանության պետի 2020 թ. թիվ 17–Լ հրամանը ճանաչվեց ուժը կորցրած: 2022 թ. հուլիսի 1–ից ՀՀ ոստիկանությունը, որպես հետաքննության մարմին չունենալով հարցաքննություններ իրականացնելու լիազորություն, այլևս չի իրականացնում նշված քննչական գործողությունը, ուստի տեսաձայնագրություններ ևս չեն իրականացվում:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ ոստիկանության կողմից տեղադրված տեսախցիկներն առնվազն ոչ միշտ են ձայնագրում: Այսպես, հայտնի են քննությամբ փաստագրված դեպքեր (օրինակ՝ Աշտարակի բաժնում 2022 թ. ապրիլի 1–ին տեղի ունեցած խոշտանգման քրեական գործով), երբ պարզվել է, որ տեսախցիկները չեն ձայնագրել: Հետագայում մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ տեսախցիկները չեն ձայնագրում. աշխատում են միայն օնլայն ռեժիմով, իսկ դրանց ձայնագրությունները չեն պահպանվում սերվերներում:

Տեսանկարահանող սարքերի աշխատանքի դադարեցման հետևանքով նաև հաճախակի դարձան ոստիկանության բաժիններում բռնության դեպքերի մասին արժանահավատ ահազանգերը. եթե վերջին առնվազն 10 տարում Հայաստանում չէր արձանագրվել ոստիկանության բաժանմունքում փաստաբանի նկատմամբ բռնության որևէ դեպք, ապա 2023 թվականի առաջին կիսամյակում եղել է երեք նման դեպք: Ընդ որում, եթե ՀՀ ՆԳՆ ոստիկանության Էրեբունու բաժնում տեղի ունեցած առաջին դեպքից հետո կարող էր տպավորություն ստեղծվել, որ դա բացառություն է, ապա երկրորդ ու երրորդ դեպքից հետո ակնհայտ է դառնում, որ գործ ունենք ոստիկանական անպատժելիության աճող միտման հետ:

Խոշտանգումներին համակարգային առումով նպաստող մեկ այլ հանգամանք էլ ոստիկանության ծառայողների խրախուսման գործող համակարգն է, որով քաղաքացուց բռնությամբ ինքնախոստովանություն կորզած ծառայողները ոչ միայն չեն պատժվում, այլև պարգևավճար են ստանում «հանցագործություն բացահայտելու համար»: Այդ խնդիրը ավելի մանրամասն նկարագրված է զեկույցի «Հանցավորության դեմ պայքարը» բաժնում:

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ

Ոստիկանության գլխավոր խնդիրներից է հանցագործությունների բացահայտումը: Դա այն հիմնական առաքելությունն է, որը ժողովրդավարական հասարակություններում ունենում են ոստիկանական մարմինները: Այս ոլորտում, սակայն, առկա են էական և մնայուն խնդիրներ:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱ

Հայաստանի դատահիրավական համակարգը հանցավորության դեմ պայքարի հիմնական ցուցանիշ է ընկալում հանցագործությունների բացահայտման տոկոսը: Ուսումնասիրությունները, սակայն, ցույց են տվել, որ «բացահայտված հանցագործություն» եզրույթն ունի խիստ ժամկետանց ու իրականությունն աղավաղող սահմանում (հանցագործությունը համարվում է «բացահայտված», երբ անձի նկատմամբ հանցագործություն կատարելու կասկածանքի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով հարուցվում է քրեական հետապնդում): Արդյունքում, բազմաթիվ հանցագործություններ որակվում են որպես «բացահայտված», սակայն, իրականում, ոչ հայտնաբերված է այն կատարած անձը (երբեմն, այդ անձը անգամ հայտնի չէ), ոչ հայտնաբերված է գողոնը (եթե այդպիսին կա) և ոչ էլ հավաքագրված են քննության համար էական ապացույցներ:

Այսպիսով, մի շարք ծանր հանցատեսակներով «բացահայտված» հանցագործությունների վիճակագրական պատկերն էապես տարբերվում է մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված հանցագործությունների քանակից:

Օրինակ՝ 2017–ից 2022 թվականներին կատարված սպանությունների 75 տոկոսը որակվել է «բացահայտված», այնինչ դրանց միայն 27 տոկոսն է, որ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Այլ կերպ ասած, այդ հինգ տարում «բացահայտված» որակված երեք սպանություններից երկուսի համար որևէ մեկը դատարանի առջև չի կանգնել:

Համանման պատկերներ են նաև այլ հանցատեսակներով:



ՕՊԵՐ–ԼԻԱԶՈՐՆԵՐԸ ՄՈՏԻՎԱՑՎԱԾ ՉԵՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ

«Բացահայտված» հանցագործությունների այս պատկերը, բացի հանրության աչքերում հանցավորության դեմ պայքարի՝ իրականությունից կտրված պատկերի ձևավորումից, նաև աղավաղում է ոստիկանության ստորաբաժանումների ու ծառայողների աշխատանքի գնահատման սկզբունքները: Այն խրախուսում է ոչ թե արդյունքահենք աշխատանքը, այլ չափանիշի ձևական բավարարումը, որը, իր հերթին, մոտիվացնում է իրականացնելու խոշտանգումներ:

Մասնավորապես, քանի որ ինքնախոստովանական ցուցմունքը բավարար է լինում հանցագործությունը «բացահայտված» համարելու համար, ոստիկանական համակարգը, դրա ստորաբաժանումներն ու առանձին ոստիկաններ

մոտիվացված են լինում ոչ թե անձի՝ հանցագործություն կատարած լինելու մասին ապացույցներ հավաքագրելու, այլ, պարզապես, նրա վրա ճնշում գործադրելու (հաճախ՝ նաև խոշտանգելու) միջոցով ինքնախոստովանական ցուցմունք կորզելու:

Ինքնախոստովանական ցուցմունք ստանալու դեպքում հանցագործությունը համարվում է «բացահայտված» (քանի որ ինքնախոստովանությունը բավարար է մեղադրանք առաջադրելու համար), այն իրականացրած օպեր–լիազորը ստանում է պարգևավճար (եթե խոսքը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին է), այն քննած ստորաբաժանումը և ամբողջ ոստիկանությունն էլ ստանում են «բացահայտված հանցագործությունների» լավ վիճակագրություն:

Այսպիսով ստացվում է, որ թե՛ ոստիկանական համակարգը և թե՛ ոստիկանները մոտիվացված են լինում անձանց խոշտանգելու միջոցով ինքնախոստովանական ցուցմունքներ ստանալու, քանի որ դրանցով ապահովվում է «լավ» վիճակագրություն:

Փոխարենը, ո՛չ ոստիկանական համակարգը և ո՛չ էլ ոստիկանները որևէ կերպ մոտիվացված չեն աջակցելու քննչական մարմիններին՝ քննության համար կարևոր ապացույցների հավաքագրմամբ: Իսկ սա, իր հերթին, շեշտակի նվազեցնում է նախաքննությունների արդյունավետությունը:

Այս խնդիրը խորացավ 2014 թվականից, երբ Քննչական կոմիտեի ստեղծմամբ ոստիկանությունից հանվեցին քննչական մարմինները: Եթե նախքան այդ քննություններին ապացույցներով աջակցելու գերատեսչական շահ կար, ապա այժմ, երբ քննություն իրականացնողն ու ապացույցներով աջակցողը տարբեր գերատեսչություններում են, քրեական հետախուզության մարմինների՝ քննությանը աջակցելու մոտիվացիան էապես պակասում է:

Այս առումով պատկերն էապես տարբերվում է Հակակոռուպցիոն կոմիտեում և ԱԱԾ–ում, որտեղ, բոլոր խնդիրներով հանդերձ, քրեական հետախուզության ստորաբաժանումները, ընդհանուր գերատեսչական շահից ելնելով,

որոշակիորեն մոտիվացված են աջակցելու իրենց իսկ գերատեսչության քննիչների վարույթում քննվող գործերին:

Ոստիկանության բարեփոխումների 2020–2022 թվականների ռազմավարությամբ նախատեսվում էր քննարկել ոստիկանությանը որոշ հանցատեսակների մասով նախաքննություն վարելու լիազորություն տալու, ինչպես նաև «դետեկտիվների» ինստիտուտի ներդրման հարցերը, որոնք, ըստ էության, այդպես էլ չքննարկվեցին:

ՀԱՂՈՐԴՈՒՄ ՏՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ «ՑՐԵԼՈՒ» ԱՎԱՆԴՈՒՅԹ

Վերջին ժամանակաշրջանում և, մասնավորապես, 2020 թվականի պատերազմից հետո հանցագործությունների ընդհանուր թվի աճի ֆոնին, էապես շատացել են քաղաքացիներից ստացվող արժանահավատ ահազանգերը՝ ոստիկանությունում հանցագործությունների մասին հաղորդումները չընդունելու մասին:

Խոսքը, մասնավորապես, վերաբերում է այնպիսի հանցագործություններին, որոնց բացահայտելու հավանականությունը մեծ չէ և որտեղ կամ չկա տուժող, կամ տուժողի վնասը փոքր լինելով պայմանավորված՝ մեծ չէ քննություն պահանջելու տուժողի մոտիվացիան:

Քաղաքացիներից հաղորդումներ չընդունելը դրսևորվում է քաղաքացուն համոզելու միջոցով: Բարձր իրավագիտակցությամբ քաղաքացու կողմից պնդելու դեպքում հաղորդումները, որպես կանոն, ընդունվում են:

Ստացած ահազանգերը, որպես կանոն, վերաբերում են այնպիսի դեպքերին, երբ քաղաքացուն փորձում են համոզել, որ նա վստահ չէ, որ տեղի է ունեցել հանցագործություն և սխալվելու դեպքում կարող են հաղորդում տված քաղաքացու համար խնդիրներ ծագել («սուտ մատնության» հոդվածով): Օրինակ՝ բնակարանից ոչ մեծաքանակ առարկաների գողության ժամանակ քաղաքացուն փորձում են համոզել, որ այդ առարկաները կորել են, դրամապանակի կամ բջջային հեռախոսի գրպանահատության դեպքի մասին ահազանգող քաղաքացուն ևս կարող են փորձել համոզել, իրերը պարզապես կորել են: Թեթև կամ ընտանեկան բռնության զոհին հաճախ փորձում են համոզել, որ դրանում որևէ խնդիր չկա: Գրանցվել են դեպքեր, երբ օտարերկրացուց հրաժարվել են հաղորդում ընդունել՝ անգլերեն կամ ռուսերեն լեզուների թարգմանչի բացակայության պատրվակով:

Բոլոր այդ դեպքերը աչքի են ընկնում նրանով, որ ոստիկանները, առաջին հերթին, փորձում են պարզել, թե արդյո՞ք տուժողը գիտի, թե ով է կատարել արգելված արարքը և որքանով հեշտ կլինի պարզել այդ անձին: Հաղորդում չտալուն հակելը սկսվում է այն ժամանակ, երբ ոստիկանները գալիս են այն ներքին համոզման, որ այդ գործը բացահայտելը դժվար կամ քիչ հավանական է ու, հավանաբար, այն կմնա որպես չբացահայտված՝ վատ անդրադառնալով վիճակագրության վրա:

Այս առումով կարևոր է նաև ընդգծելը, որ արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ հանցագործության մասին հեռախոսով (ոստիկանության 1–02 հեռախոսահամարին) ահազանգելուց հետո Օպերատիվ կառավարման կենտրոնից (ՕԿԿ) դեպքի վայր են ուղարկվել ոչ թե պարեկներ (որոնք, որպես կանոն, ընդունում են բոլոր հաղորդումները), այլ ոստիկանության տարածքային ստորաբաժանման ծառայողներ (որոնք հենց դրսևորում են հաղորդումները չընդունելու խնդրահարույց պրակտիկան): ՕԿԿ–ի կողմից այդ մոտեցումը կասկածներ է հարուցում, որ դա արվում է համակարգված՝ դժվար բացահայտելի հանցագործությունների դեպքերով «բացահայտված» հանցագործությունների վիճակագրական (տոկոսային) պատկերը «չփչացնելու» համար:

ԳԱՂՏՆԱԼՍՄԱՆ ՉԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ և ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼԻԶՄԻ ՊԱԿԱՍ

Այս պատկերը համալրվում է նրանով, որ ոստիկանությունը հանցավորության դեմ պայքարում էական խնդիրներ ունի նաև պրոֆեսիոնալիզմի ու կարողությունների համատեքստում: Բազմաթիվ են ահազանգերը ոստիկա-

նության քրեական հետախուզության ծառայողների կողմից հանցագործությունների վայրում ապացույցները չհավաքելու (կամ փչացող ապացույցներն ուշ հավաքելու), ապացույցները պատահաբար փչացնելու, հանցագործությունները պատկերող տեսագրությունները նախքան դրանց ջնջվելը վերցնելը ուշացնելու և այլ բացթողումների մասին:

Ընդ որում, այս խնդիրները լուծելու ուղղությամբ առայժմ չեն ձեռնարկվել համակարգային փոփոխություններ: Այսպես, 2019 թվականին Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» օրենքում[7] և հնարավորություն ստեղծեց, որ ոստիկանությունը ևս իրականացնի հեռախոսների գաղտնալսումը և տեղորոշումը (Հեռախոսային խոսակցությունների վերահսկում), որը նախքան այդ կարող էր անել միայն ԱԱԾ–ն (ինչը էապես դժվարացնում էր ոստիկանության կողմից ծանր ու առանձնապես ծանր հանցագործությունների քննությունը): Սակայն օրենսդրական հնարավորության ստեղծումից 4 տարի անց ոստիկանությունը դեռևս ձեռք չի բերել համապատասխան տեխնիկական սարքավորումները, որպեսզի կարողանա իրականացնել օպերատիվ այդ միջոցառումը:

ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԾՔԸ

2021 թվականից Հայաստանի մայրաքաղաքում ու մարզերում սկսեց ներդրվել Պարեկային ոստիկանությունը, որը մեկտեղեց ոստիկանության արտաքին ծառայության գործառույթները՝ փոխարինելով Ճանապարհային ոստիկանությանն ու պարեկապահակակետային ծառայությանը:

Մի շարք օբյեկտիվ ցուցանիշներ վկայում են, որ Պարեկային ծառայության ներդրումը հաջողված է: Երևանում արտաքին ծառայության կողմից հանցա-

[7] ՀՀ օրենքը օպերատիվ–հետախուզական գործունեության մասին: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185410

վորության բացահայտումը, Պարեկայինի ներդրմամբ, աճել է 2.5 անգամ, իսկ Շիրակի ու Լոռվա մարզերում՝ 14 անգամ: Հետախուզվող հանցագործների հայտնաբերումն աճել էր 6 անգամ, բազմապատիկ աճել են նաև ճանապարհային երթևեկության վտանգավոր խախտումների (օրինակ՝ ոչ սթափ վիճակում ավտովարման) արձանագրման դեպքերը:

Ավելին, պարեկային ոստիկանները Հայաստանում միակ պաշտոնատար անձինք են, որոնք զանգվածաբար զեկուցում են քաղաքացիների կողմից իրենց կաշառք առաջարկելու մասին: Հակակոռուպցիոն կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ տարեկան կտրվածքով Հայաստանում կաշառք տալու փորձի մասին հաղորդում (զեկուցագիր) են ներկայացնում մի քանի տասնյակ պարեկներ և, առավելագույնը, 1–2 այլ պաշտոնյա, ինչը խոսում է պարեկների շրջանում բարեվարքության էապես ավելի բարձր միջին մակարդակի մասին:

Պարեկային ծառայությունը նաև ոստիկանության միակ ստորաբաժանումն է, որի ծառայողներն անցել են ընտրության ու զտման լուրջ ֆիլտրի միջոցով (ծառայությունից առաջ անցել են հենց իրենց ծառայության համար ստեղծված դասընթաց, հանձնել են IQ թեստ, անցել են հոգեբանական ստուգում և ներառական հարցազրույց):

Ոստիկանության բարեփոխումների ընթացքում քննարկման հիմնական ուղղություններից մեկն այն էր, որ համակարգի (առաջին հերթին՝ Պարեկային ծառայության) ներսում ծառայողների նկատմամբ ներքին արդարության, հարգալից վերաբերմունքի ու առաջադիմության հստակ մեխանիզմների ներդրումը կհանգեցնի նաև ծառայության որակի և քաղաքացիների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությանը: Սակայն մի շարք ցուցանիշներ վկայում են այն մասին, որ այդ տրանսֆորմացիայի փորձը հաջողությամբ չավարտվեց:

ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Պարեկային ծառայության ստեղծման ամենասկզբից՝ 2021 թվականից, Պարեկային ծառայությունում կոչումների շնորհումը դրվել էր շատ հստակ չափանիշների վրա: Մասնավորապես, ամբողջությամբ հանվեց կոչումներ շնորհելու հայեցողությունը. դրանք շնորհվում էին կամ օրենքով սահմանված ժամկետում հերթական կոչում ստանալու մեխանիզմով, կամ էլ սովորող ապագա պարեկների ավարտական քննությունների գնահատականների հիմման վրա:

Ընդ որում, սովորող պարեկների ավարտական քննությունների հիմման վրա էին նաև պարեկների նշանակումները՝ կրտսեր պարեկ, պարեկ և ավագ պարեկ պաշտոններին, ինչը ևս ամբողջությամբ հանում էր հայեցողությունը (ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերը) այս պաշտոնների նշանակման հարցում:

Այդուհանդերձ, ի հակառակ քննարկումների և Արդարադատության նախարարությունում կայացված որոշումների, 2022 թվականի վերջին ոստիկանությունը սկսեց սպայական կոչումներ շնորհել պարեկներին առանց այդ որոշման հիմքում հստակ ու աներկբա չափանիշներ դնելու: Ըստ էության, այդ որոշումների հիմքում առհասարակ որևէ չափանիշ այդպես էլ չդրվեց:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այդուհանդերձ, բոլոր հաջողությունների ֆոնին, Պարեկայինի ծառայողներին բաժին հասնող կարգապահական տույժերի թիվը շեշտակի ավել է ոստիկանական այլ մարմինների ծառայողների համեմատ:

Այսպես, 2022 թվականին ոստիկանության պետի կողմից 253 ոստիկանների ներկայացված կարգապահական տույժերից 146–ը պարեկների դեմ էին (այսինքն՝ 58%–ը): Այսինքն, Հայաստանում այդ տարվա դրությամբ առկա մոտ 1300 պարեկներին ոստիկանապետից բաժին է ընկել ավելի շատ կարգապահական տույժ, քան մնացած (10 հազարից ավել) ոստիկաններին՝ միասին վերցրած: 2023 թվականին պարեկների նկատմամբ այդ կարգապահական դիսկրիմինացիան էլ ավելի աճեց:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ պարեկների նկատմամբ ծառայողական տույժերի մեծ մասը ձևական բնույթի խախտումների համար է: Ավելին, ձևական բնույթի խախտումների համար կիրառվող տույժերը խոչընդոտում են, որ լուրջ հանցագործություն բացահայտած պարեկները ստանան ավանդաբար դրա համար հատկացվող պարգևավճարները:

Այսպես, օրինակ, «մեթամֆետամին» վաճառող հանցավոր խմբի բացահայտած երկու պարեկ չստացան որևէ պարգևավճար, քանի որ դրանից մոտ մեկ տարի առաջ արձանագրության բլանկ էին կորցրել:

Կարգապահական տույժերի կիրառման այս մոտեցումը, ըստ էության, հետևանք է Պարեկային ծառայության կողմից ծառայության ձևական մասը բովանդակայինին ստորադասելու, որը հակասում է ոստիկանությունում ձևավորված ավանդույթներին:

ՈՉ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՈՒՄ

Պարեկային ծառայության ներդրման հենց սկզբից կանոնադրությամբ[8] հստակ ամրագրվեց, որ դրա կարգախմբերը պետք է իրականացնեն շարժվող պարեկություն և անշարժ ծառայություն իրականացնեն միայն բացառիկ իրավիճակներում,այն էլ՝ կարճատև: Այդուհանդերձ, Երևան քաղաքի գնդում և մարզային գումարտակներում պարեկները պարբերաբար ներգրավվում են (բարձրաստիճան պաշտոնյաների) ուղեկցում իրականացնելու մեջ (թեև դա ոստիկանության այլ ստորաբաժանումների կանոնադրական գործառույթն է) և դրա սահմաններում պարեկության փոխարեն տևական ժամանակ կանգնած ծառայություն են իրականացնում (սպասելով ուղեկցվող ավտոշարասյա-

8 ՀՀ ոստիկանության պետի 23 սեպտեմբերի 2020 թ. թիվ 36–լ հրաման ոստիկանության պարեկային ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին: https://www.arlis.am/documentview.aspx?docid=154210

նը)՝ չմեկնելով ահազանգերով դեպքերի վայրեր ու անտեսելով նույնիսկ իրենց ներկայությամբ տեղի ունեցող երթևեկության կանոնների խախտումները:

Ընդ որում, Երևան քաղաքում պարեկային կարգախմբերը ներգրավվում են ոչ միայն ուղեկցումներ իրականացնելու, այլև օտարերկրյա բարձրաստիճան հյուրերով հյուրանոցների պահպանության, տոնածառերի ու այլ արժեքավոր իրերի պահպանության գործում:

Իսկ ահա երևանամերձ մարզերի գումարտակների պարեկային ծառայողները բազմիցս նկատվել են ճամփեզրին կանգնած՝ անցնող վարորդներին կանգնեցնելով ծառայություն իրականացնելիս: Նման պրակտիկա եղել է նախքան 2006 թվականը, սակայն այն ավարտվել էր պետավտոտեսչությունը Ճանապարհային ոստիկանության փոփոխման ժամանակ:

Պարեկային ծառայողների՝ կանոնադրությամբ չնախատեսված գործառույթների իրականացմանը ներգրավելը միայն հանգեցնում է անմիջական գործառույթների թերակատարմանը, այլև հաճախ կողմնակի դիտորդի մոտ առաջացնում է ոստիկանի անկանխատեսելի պահվածքի ընկալում:

Մասնավորապես, երբ ուղեկցման համար ֆիքսված տեղում (ավտոշարասյանը սպասող) ծառայություն իրականացնող պարեկը չի արձագանքում նույնիսկ իր տեսադաշտում տեղի ունեցող իրավախախտումներին, հանրության մոտ ձևական ծառայության օբյեկտիվ տպավորություն է ընկալվում:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ոստիկանության բարեփոխումների հիմնական մեխը պետք է լիներ քաղաքացի–ոստիկան հարաբերությունների որակական փոփոխությունը: Դրա անբաժանելի մաս պետք է լիներ ոստիկանների (առաջին հերթին՝ արտաքին ծառայություն իրականացնող) համար բոլոր քաղաքացիների նկատմամբ հավասար վերաբերմունքը: Արդյունքում, բոլոր քաղաքացիները պետք է զգային, որ որևէ մեկը իրենցից արտոնյալ չէ և օրենքի առջև բոլորը հավասար են:

Այս հարցում, սակայն, էական պրոգրեսը երկար չտևեց, ու 2023 թվականին նկատվեց նախկինում արձանագրված հաջողություններից որոշակի հետընթաց:

ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆՔ ԵՎ ՈՒԺԱՅԻՆՆԵՐ

Պարեկային ծառայության ստեղծման պահից ի վեր նախկինում անպատժելի վարորդների մի ամբողջ խավ լուրջ անակնկալի եկավ, երբ սկսեց ենթարկվել միևնույն վարչարարությանը, ինչ այլ քաղաքացիները: Գերակշռապես խոսքը բարձրաստիճան պաշտոնյաների և ուժային կառույցների ծառայողների մասին է, որոնք նախկինում երբեք վարչարարության չեն ենթարկվել ոստիկանության արտաքին ծառայողների կողմից՝ «ծառայողական սոլիդարության» սկզբունքի շրջանակներում:

Այսպես, օրինակ, Ազգային ժողովի իշխող խմբակցության պատգամավոր Ն.Ղ.–ն պարեկների կողմից զրկվել էր տրանսպորտային միջոցը վարելու իրավունքից: Նման ճակատագրի արժանացան նաև բազմաթիվ բարձրաստիճան ծառայողներ Ոստիկանությունից, ԱԱԾ–ից և այլ մարմիններից:

Այդուհանդերձ, 2023 թվականից սկսեցին գալ մեծաքանակ ահազանգեր՝ պաշտոնատար անձանց նկատմամբ պատշաճ վարչարարություն չիրականացնելու և այդ ուղղությամբ հստակ քաղաքականություն իրականացնելու

մասին: Հանրությանը հայտնի դարձած դեպքերից նշենք, որ նախ ՆԳ նախարար Վահե Ղազարյանը Պարեկայինի անձնակազմի հետ հանդիպումներում բավականին աներկբա կերպով ուղերձ հղեց՝ կապված պարեկների կողմից այլ ոստիկաններին տուգանելը «խղճին հակասող» լինելու մասին: Այնուհետև ծառայության Երևան քաղաքի գնդի հրամանատարը շարքի առջև վիրավորական ոճով նկատողություն տվեց պարեկներին՝ բարձրաստիճան ԱԱԾ–ականին տուգանելու համար:

Այնուհետև եղան մի շարք ահազանգեր՝ պարեկների կողմից երթևեկության կանոնները խախտած ՔՊ–ական պատգամավորին և ուժայիններին չտուգանելու մասին, իսկ ահա Կոտայքի մարզում հրամանատարությունը փորձում էր մարզի դատախազին օրինախախտման (առկայծող փարոսիկների ապօրինի օգտագործելու) համար նկատողություն արած պարեկին պարտադրել ներողություն խնդրել դատախազից:

Բացի այդ, եթե 2022 թ.–ին Պարեկային ծառայությանը հաջողվեց լուծել իրավապահ մարմինների շենքերի մոտ օրենքի խախտմամբ ավանդաբար երկու շարքով (ու մայթերին) կանգնող մեքենաների հարցը և այդ տարածքներում երթևեկությունը բերել օրինական պատկերի, ապա 2023 թվականին վիճակը կտրուկ վատթարացավ, և Կառավարության, դատախազության, ՆԳՆ–ի, ինչպես նաև ոստիկանության ու ԱԱԾ–ի ստորաբաժանումների մոտ կարելի է նկատել խախտումներով, երկրորդ շարքում ու մայթերին կայանված բազմաթիվ մեքենաներ, որոնց նկատմամբ Պարեկային ծառայությունը ոչինչ չի ձեռնարկում:

Ընդ որում, արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ պետական մարմինների մոտ խախտումով կանգնած մեքենաների մասին քաղաքացիներն ահազանգել են ոստիկանություն, և կամ ոչինչ չի արվել (նույնիսկ պարեկ չի ժամանել), կամ, լավագույն դեպքում, ժամանած պարեկը սահմանափակվել է իրավախախտների մեքենան դուրս բերելու հորդորով:

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՄԵՐԺՈՒՄ

Համաձայն գործող օրենսդրության, ծառայողական ավտոմեքենաներով կատարված երթևեկության կանոնների խախտման համար ծառայողները ենթակա են կարգապահական պատասխանատվության: Ու թեև ոստիկանները բավականին շատ են խախտում երթևեկության կանոնները, այդ մեխանիզմը, սակայն, ընդհանրապես չի գործում:

Այսպես, օրինակ, 2023 թ.–ի 9 ամիսների ընթացքում ՀՀ ՆԳՆ «Ոստիկանության տեսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ–ի կողմից Ճանապարհային ոստիկանություն է փոխանցվել ոստիկանությանը պատկանող տրանսպորտային միջոցներով կատարված և խաչմերուկների տեսախցիկներով ու արագաչափերով արձանագրված 305 խախտում (դրա մեջ չեն մտնում առկայծող փարոսիկներով ավտոմոբիլները՝ պարեկները, ճանապարհային ոստիկանները և այլն): Սակայն այդ 305–ից և ոչ մեկի մասով չի իրականացվել ծառայողական քննություն, որևէ մեկը չի կրել կարգապահական պատասխանատվություն: Ըստ ՆԳՆ–ից ստացված տվյալների, այդ խախտումներից անխտիր բոլոր կատարվել են ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված, ինչը, սակայն, տարօրինակ պնդում է, քանի որ նման անհրաժեշտությունը կարող էր պարզվել միայն քննությամբ (որը չի արվել):

Ավելին, երբ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ–ի կողմից ստեղծվեց «Զարաճճի պաշտոնյաներ» նախաձեռնությունը ու խրախուսվեց քաղաքացիների կողմից ոստիկանների՝ երթևեկության կանոնների խախտումների մասին ահազանգելը, այդ ահազանգերից միայն մոտ 40 տոկոսով իրականացվեց ծառայողական քննություն, բայց այդպես էլ որևէ ոստիկան որևէ տույժ չստացավ:

«Ստուգման ենթակա չէ» նշումով հատուկ կտրոններ («նարուշիլովկաներ»)

«Նարուշիլովկաներ» ունենալու ավանդույթն իրավապահ համակարգում ունի սովետական ավանդույթ: Դրանք հատուկ կտրոններ են, որոնց գոյությունը

հակասում է Հայաստանի օրենսդրությանը և որոնք կանոնակարգվում են ոստիկանության պետի հրամանով և, սովորաբար, տրվում են տարբեր մարմինների օպերատիվ ծառայողներին: Այս կտրոնի ներկայացումը հնարավորություն է տալիս երթևեկության կանոնների ցանկացած տեսակի խախտման պարագայում անգամ չզննվել, ստուգվել կամ տուգանվել ոստիկանության կողմից:

Այս կտրոնները, որոնք, պարզվել է, հաճախ նաև մասնավոր անձանց ձեռքում էլ են հայտնվում, հնարավորություն են տալիս նաև ավտոմոբիլի վրա տեղադրել գոյություն չունեցող կամ խոտանված հաշվառման համարանիշեր, ինչի միջոցով վարորդը պատասխանատվություն չի կրում նաև տեսախցիկների կողմից արձանագրված երթևեկության կանոնների խախտումների համար:

Այս կտրոնների առկայությունն ինքնին խաթարում է քաղաքացիների իրավահավասարությունը և վտանգում ճանապարհային երթևեկության անվտանգությունը:

ՄԳԱՑՎԱԾ ԱՊԱԿԻՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ

2023 թ. մայիսին ոստիկանությունը, ԱԺ պատգամավոր Արսեն Թորոսյանի նախաձեռնությամբ, օրենքով սահմանվածից ավել մգացված ապակիների դեմ իրազեկման արշավ սկսեց, իսկ հունիսից՝ նաև վարչարարություն: Ու թեև այս գործողությունները ճանապարհային երթևեկության անվտանգության տեսանկյունից հաջողված էին (նորմայից ավել մգացված ապակիներով մեքենաների թիվը շեշտակի նվազեց), սակայն նորանոր հարցեր բացեցին քաղաքացիների իրավահավասարության տեսանկյունից:

Մասնավորապես, թեև բազմաթիվ քաղաքացիներ, ի հակառակ իրենց հարմարավետության ու կամքի, հեռացրել են օրենքից ավելի չափով ապակիները մգացնող ժապավենները, սակայն երթևեկության մեջ բավականին հաճախ են նկատվում առավել մգացված ապակիներով տրանսպորտային միջոցներ, ինչը քաղաքացիների մոտ ստեղծում է օբյեկտիվ դժգոհություն այն առումով, որ օրենքի ինպլեմենտացիայի խստացումը բոլորի վրա չի տարածվել:

Ընդ որում, պետք է նկատել, որ շատ հաճախ օրենսդրությամբ սահմանվածից ավելի մգացված ապակիներով մեքենաներ նկատվում են կառավարության, դատախազության և այլ պետական մարմինների կայանատեղիներում:

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Ոստիկանության հիմնական խնդիրներից եղել և մնում է զանգվածային միջոցառումների սպասարկումը, դրանց խաղաղ բնույթի արդյունավետ պահպանումը ու դրանց մասնակիցների իրավունքների նկատմամբ հարգանքը: Այս ոլորտում, սակայն, գործնականում, որևէ փոփոխություն չկա:

Զանգվածային միջոցառումների ժամանակ, ինչպես և նախկինում, ստեղծվում են ոստիկանական խառը ուժեր՝ կազմված տարածքային ստորաբաժանումների ծառայողներից, ոստիկանության զորքերի ծառայողներից և Երևան քաղաքի վարչության հատուկ նշանակության գումարտակից: Այս ստորաբաժանումներից և որևէ մեկը գործնականում մասնագիտացած չէ զանգվածային միջոցառումների սպասարկման վրա:

Հարկ է նկատել, որ զանգվածային միջոցառումների ու բողոքի գործողությունների ժամանակ ոստիկանության կողմից շարունակվում են հավաքների ազատության իրավունքի պարբերական անհամաչափ սահմանափակումները, որոնք արձանագրել են մի շարք ՀԿ–ներ[9] և ՄԻՊ[10]–ը: Ավելին, ամեն անգամ, երբ ոստիկանությունը հատուկ միջոցներ է կիրառում քաղաքացիների հետ ընդհարումների ժամանակ, այդ հատուկ միջոցների սխալ կիրառման հետևանքով տուժում են ավելի (երբեմն՝ նույնիսկ միայն) ոստիկաններ

[9] 35 ՀԿ պահանջում են ոստիկանապետի պաշտոնանկությունը: https://uic.am/16163

[10] Մարդու իրավունքների պաշտպանը կայացրել է քաղաքացիների հավաքների ազատության իրավունքի խախտման առկայության մասին որոշում: https://www.ombuds.am/am/site/ViewNews/2781

(2016–ի հուլիսին արցունքաբեր գազ[11], 2018–ի ապրիլին[12] ու 2022–ի հունիս[13] լուսաձայնային կրակոցներ), ինչը վկայում է այդ միջոցները կիրառող ստորաբաժանումների ոչ կոմպետենտության մասին:

Ոստիկանության բարեփոխումների 2020–2022 թվականների ռազմավարությամբ 2022 թվականի վերջում պետք է ավարտված լիներ ոստիկանության զորքերի ապառազմականացումը, որոնք և կմասնագիտանան, այդ թվում, զանգվածային միջոցառումների սպասարկման ու զանգվածային անկարգությունների դեմ պայքարի վրա: Այդուհանդերձ, ոստիկանության զորքերի բարեփոխումը ոչ միայն չի ավարտվել, այլ, գործնականում, նույնիսկ չի էլ սկսել և 2023 թվականի դեկտեմբերի դրությամբ միմիայն օրենսդրական նախագծի տեսք ունի:

Շարունակում են նաև խիստ հակասական ու անհստակ մնալ լուսաձայնային նռնակների, ջրանետի ու արցունքաբեր գազի կիրառման սահմանափակումներն ու կարգերը հաստատող Առողջապահության նախարարի 2012թ.–ի թիվ 09–Ն հրամանը[14] և ՀՀ ոստիկանապետի 2009 թ.–ի թիվ 5–Ն հրամանը[15], որը, ի հակառակ քաղաքացիական հասարակության առաջարկությունների, այդպես էլ չփոխվեց:

[11] Ոստիկանությունն ընդդեմ քաղաքացիների. 775 բերման ենթարկված: https://www.armtimes.com/hy/article/91748

[12] Ոստիկանները ձայնային նռնակներ են նետում խաղաղ ցուցարարների վրա (տեսանյութեր): https://epress.am/2018/04/16/%D5%88%D5%BD%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8–%D5%B1%D5%A1%D5%B5%D5%B6%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%D5%B6%D5%BC%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80–%D5%A5%D5%B6–%D5%B6%D5%A5%D5%BF.html

[13] Ոստիկաններն ու ցուցարարները հիմնականում հարվածի, հրմշտոցի հետևանքով են վնասվածքներ ստացել. Անահիտ Ավանեսյան: https://www.azatutyun.am/a/31887261.html

[14] Մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները սահմանելու մասին ՀՀ ԱՆ 20 ապրիլի 2012 թ. թիվ. 09–Ն հրաման: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75547

[15] Ոստիկանության զորքերի կողմից հատուկ միջոցներ օգտագործելու և հատուկ միջոցները ոստիկանության զորքերի զինծառայողներին հատկացնելու կարգը սահմանելու մասին 23 հոկտեմբերի 2009 թ. թիվ 5–Ն ՀՀ ոստիկանության պետի հրաման: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=54989

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ

Միջազգային գործընկերների կողմից նախատեսվում էր աջակցության մեծ փաթեթ տրամադրել ոստիկանությանը բարեփոխումների գործընթացի շրջանակում: Փաթեթը ներառում էր ինչպես փորձագիտական, այնպես էլ նյութական աջակցություն, իսկ կարիքի ձևակերպումը՝ անհրաժեշտ միջոցների ցանկը, պետք է ներկայացվեր ոստիկանության կողմից՝ ըստ առկա պահանջների: Ոստիկանության կողմից ներկայացված փաթեթում, ի թիվս այլ միջոցների, առկա էին նաև ալկոմետրներ, որոնք պետք է օգտագործվեին Պարեկային ծառայությունում:

ԱՄՆ դեսպանատան կողմից, ոստիկանության կողմից ներկայացված պահանջներին համապատասխան, տրամադրվեցին անհրաժեշտ ալկոմետրները, սակայն հետագայում՝ գործընկերների կողմից ալկոմետրների գնումներից և մատակարարումից հետո միայն պարզվեց, որ ոստիկանության կողմից ներկայացված ալկոմետրների տեխնիկական նկարագրերը չէին բավարարում կառավարության 2009 թ. 277–Ն որոշմամբ սահմանված պահանջներին, որի հետևանքով պարեկները տևական ժամանակ օգտագործում էին Ճանապարհային ոստիկանության ավելի հին ու սակավաթիվ ալկոմետրները: ԱՄՆ գործընկերների կողմից ձեռք բերված ալկոմետրներն այդպես էլ չօգտագործվեցին ու ոստիկանությունը ձեռք բերեց նոր ալկոմետրներ[16]:

Միջազգային գործընկերների կողմից մյուս աջակցությունը ռադիոկապի տեսքով էր: Երևան քաղաքի Պարեկային ծառայության կապի համար ընտրվել էր շատ եզակի՝ 300 Mhz հաճախականությունը, որի համար հատուկ պատվեր կատարվեց «Մոտորոլային»: Քանի որ նշված հաճախականության սարքերը սերիական արտադրության չեն, դրանց մատակարարումը շատ ուշացավ: Ընդ որում, հենց «Մոտորոլայի» ընտրությունը պայմանավորված էր դրա բարձր որակով, որի համար, նույնիսկ, մանրամասն հիմնավորումներ ներկայացվեցին դոնորներին, թե ինչու է պետք մեկ անձի սկզբունքով առանց մրցույթի գնել հենց այդ «Մոտորոլաները»:

Այնուհետև, սակայն, երբ պարզ դարձավ, որ այս հաճախականության համար այլևս հնարավոր չի լինելու ռադիոկապի միջոցներ ձեռք բերել (ինչը, իրականում, ամբողջությամբ կանխատեսելի էր նաև ամենասկզբում), որոշվեց հաճախականությունը փոխել, որի հետևանքով Երևան քաղաքի պարեկների ռադիոկապը առանձին է լինելու մյուս քաղաքների ռադիոկապից և, ուրեմն, ժամանակի ընթացքում պետք է փոփոխվի:

Այս դեպքերը, բնականաբար, բացասաբար են ազդել ոստիկանության՝ որպես հուսալի գործընկեր համբավի վրա, քանի որ միջազգային գործընկերներից հայցված տեխնիկան արդյունքում չի օգտագործվել:

ԱՄՆ դեսպանատան կողմից ստացված աջակցության մասով նաև կոռուպցիոն սխեմա է եղել: Մասնավորապես, ԱՄՆ գործընկերներից ոստիկանության Օպերատիվ կառավարման կենտրոնի համակարգի IP տեսախցիկների ծրագրային փաթեթը ստանալուց հետո ոստիկանությունը իրականացրել է մրցույթ և նույն մատակարարից ձեռք է բերել նույն փաթեթը (այսինքն՝ բյուջեից վճարել է մի ծառայության համար, որի համար ԱՄՆ դեսպանատունն արդեն վճարել էր): Այս դեպքով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ քրեական օրենսգրքի՝ պաշտոնատար անձի կողմից լիազորությունները չարաշահելու/անցնելու հոդվածով նախաձեռնվել է քրեական վարույթ[17]:

Մեր կողմից նաև արձանագրվել են դեպքեր, երբ ոստիկանությունն ապա-

[16] Քո գրպանից. որքա՞ն գումար կխնայվեր, եթե ամերիկյան ալկոմետրները «հարգեին ՀՀ օրենքը»: https://www.civilnet.am/news/696373/%D6%84%D5%B8-%D5%A3%D6%80%D5%BA%D5%A1%D5%B6%D5%AB%D6%81%E2%80%A4-%D5%B8%D6%80%D6%84%D5%A1%D5%9E%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%82%D5%B4%D5%A1%D6%80-%D5%AF%D5%AD%D5%B6%D5%A1%D5%B5%D5%BE%D5%A5%D6%80-%D5%A5%D5%A9%D5%A5-%D5%A1%D5%B4%D5%A5%D6%80%D5%AB%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%AC%D5%AF%D5%B8%D5%B4%D5%A5%D5%BF%D6%80%D5%A5%D6%80%D5%A8-%D5%B0%D5%A1%D6%80%D5%A3%D5%A5%D5%AB%D5%B6-%D5%B0%D5%B0-%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D6%84%D5%A8/

[17] Պոզով–պոչով կոռուպցիա՞. Ոստիկանությունում 150 մլն դրամով «գնել են» ԱՄՆ–ի անվճար տրամադրած համակարգը. ՏԵՍԱՆՅՈՒԹ: https://factor.am/558940.html

կողմնորոշել ու սխալ տեղեկություններ է տրամադրել ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի միջազգային քրեական հետաքննությունների վերապատրաստման աջակցության գրասենյակի (ICITAP–ի) ներկայացուցիչներին: Մասնավորապես, փաստագրվել է դեպք, երբ ոստիկանությունը (2023 թվականի փետրվարի 10–ին Հանրապետության Հրապարակում «Համմեր» մեքենայի վարորդի անկարգությունների դեպքը) ICITAP–ի ներկայացուցիչներին սուտ ինֆորմացիա է տվել՝ կապված պարեկների կողմից տեղեկությունը ՕԿԿ չփոխանցելու մասին, երբ ծառայողական քննությամբ պարզվել էր, որ պարեկները դեպքի մասին անմիջապես հայտնել են ՕԿԿ:

ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

Ոստիկանությունում առկա (և կարողությունների վրա էապես ազդող) լուրջ խնդիրներից են աշխատավարձերի (սոցիալական երաշխիքների) ցածր լինելն ու արդյունավետ ծառայողների առաջադիմության (խրախուսման) համակարգի անկատարությունը: Խնդրի լուծման նպատակով կառավարությունը նախաձեռնեց ոստիկանության ու ոստիկանության զորքերի ծառայողների ատեստավորման համակարգը: Դրա սահմաններում ատեստավորումն անցած կադրերի աշխատավարձը էապես բարձրանում է, իսկ չանցածները, ի վերջո (մի քանի փորձերից հետո), հեռացվում են համակարգից:

Ատեստավորումը կազմակված է 4–ից 5 փուլերից՝ IQ թեստ, ֆիզիկական, կրակային ու մասնագիտական պատրաստության քննություններ, իսկ բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնողները (բաժնի պետից սկսած)՝ նաև հարցազրույց:

Ու թեև ատեստավորումը դեռևս նոր է սկսվել, սակայն արդեն իսկ առկա են հիշատակման արժանի որոշակի փաստեր:

Նախ պետք է նշել, որ ատեստավորմամբ պարզվեց, որ ոստիկանության ծառայողների ճնշող մեծամասնությունը չի տիրապետում ատրճանակից օգտվելու նվազագույն գիտելիքների, և ատեստավորման առաջին հոսքում պարզ կրակային քննությունը կարողացել է հաղթահարել այդ փուլ հասած ոստիկանների ընդամենը 22 տոկոսը:

Ամբողջությամբ հակառակ ծայրահեղ պատկերն էր մասնագիտական քննության հետ, որը հաղթահարում են համարյա բոլորը: Խնդիրն այստեղ մասնագիտական քննության չափազանց հեշտ թեստերն են, որոնց հարցերի թվում կան «Հայաստանի դրոշի գույները» և այլ պարզագույն հարցեր:

Բարձրագույն խմբի ծառայողները, ինչպես նշվեց, ատեստավորման հանձնաժողովի հետ նաև հարցազրույց են անցնում: Ու թեև հանձնաժողովում կան

քաղաքացիական հասարակության ու այլ պետական մարմինների ներկայացուցիչներ, սակայն ՆԳՆ ներկայացուցիչները դրանում կազմում են մեծամասնությունը: Վերջիններս հարցազրույցի ժամանակ որևէ հարց չեն տալիս կապված բարեվարքության հետ և անգամ անտեսում են հոգեբանի խորհրդատվական կարծիքը: Առհասարակ, անկախ ատեստավորվողների պատասխաններից (հաճախ նույնիսկ դահլիճում չլինելով)՝ ոստիկանության բոլոր ներկայացուցիչները բոլոր ատեստավորողներին միշտ դրական են գնահատում, ինչը հարցազրույցի փուլը դարձնում է ձևական:

Այստեղ նաև կարևոր է նշելը, որ ոստիկանության որևէ ծառայող բարեվարքության ստուգման որևէ գործընթաց որևէ փուլում չի անցնում՝ այս առումով էապես ետ մնալով համարյա բոլոր մյուս իրավապահ մարմիններից:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերոգրյալ խնդիրների փոքր մասի լուծումը ենթադրում է հետագա քննարկումներ ու ուսումնասիրություններ, բայց մնացածի լուծման նպատակով առաջարկվում է՝

1. Ոստիկանության բաժիններում տեղադրել տեսախցիկներ, որոնց տեսադաշտում կլինեն բոլոր այն տարածքները, որտեղ կարող են լինել բաժին բերված անձինք և որոնց հասանելիություն կունենան ՄԻՊ–ը, ՀԿԿ–ն ու ՔԿ–ն,

2. Ներդնել քրեական հետախուզության ծառայողների խրախուսման՝ քաղաքացիների ցուցմունքների հետ չկապված ապացույցների հավաքագրումը խթանող համակարգ,

3. Էապես վերանայել հանցավորության վիճակագրության վարման կարգը և դրանում, որպես հիմնական ցուցանիշ, ունենալ պատժի անխուսափելիության մեխանիզմի իրագործումը, վերանայել «բացահայտված հանցագործություն» եզրույթի սահմանումը,

4. Ստեղծել քրեական հետախուզության աշխատակիցների կողմից նախաքննությանը արդյունավետ աջակցելը խթանող մեխանիզմներ, քննարկել ոստիկանությանը քննչական գործառույթներ վերադարձնելու և դետեկտիվների ներդրման հարցը,

5. Ավելացնել քրեական հետախուզության արդյունավետ գործիքները, սկսել անմիջականորեն իրականացնել հեռախոսային խոսակցությունների վերահսկում միջոցառումը,

6. Հստակ կանոնակարգել քաղաքացիներից հաղորդումներ ընդունելը, ինչպես նաև ստեղծել հաղորդում տված կամ որևէ հարցով ոստիկանություն դիմած քաղաքացիներից արձագանքի հավաքագրման մեխանիզմ,

7. Ստեղծել պաշտոնների նշանակման հստակ ու նվազագույն հայեցողության տեղ թողնող կարգավորումներ, որոնք հիմնված կլինեն ծառայության նպատակների և ոչ ձևի վրա,

8. Ոստիկանների կարգապահական պատասխանատվության համար ստեղծել նվազագույն հայեցողությամբ սանդղակներ և կապել դրանք ծառայության վերջնարդյունքների և ոչ ձևի հետ,

9. Բացառել Պարեկային ծառայության՝ իր կանոնադրական նպատակներին կամ ծառայության ձևերին հակասող գործառույթների իրականացման մեջ ներգրավելը,

10. Ստեղծել մեխանիզմ, որով պարեկային ծառայողները պարտավոր են անմիջապես զեկուցագիր կազմել բոլոր այն դեպքերով, երբ ՃԵԿ խախտած վարորդը ներկայանում է որպես որևէ իրավապահ մարմնի ծառայող,

11. Հստակ օրենսդրական մակարդակում կանոնակարգել «Ստուգման ենթակա չէ» նշումով հատուկ կտրոնների տրամադրման կարգը, օգտագործման նպատակը և ներկայացման դեպքում պարեկի գործողությունները,

12. Ոստիկանության զորքերի ապառազմականացմամբ ստեղծել զանգվածային միջոցառումները սպասարկող պրոֆեսիոնալ ոստիկանության ստորաբաժանում,

13. Վերանայել ատեստավորման մասնագիտական քննությունների հարցաշարերը՝ ներառելով մասնագիտական գիտելիքները պատշաճ մակարդակի ստուգող հարցեր,

14. Ներդնել ոստիկանության բարձրագույն խմբի բոլոր ծառայողների՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովով բարեվարքության ստուգման մեխանիզմ,

15. Մշակել և ներդնել ոստիկանության հակակոռուպցիոն ռազմավարություն՝ ավելացնելով բոլոր հնարավոր գործընթացների ներքին վերահսկելիությունն ու արտաքին թափանցիկությունը: